Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17438

1861

37(47.925)
Ч - 33

2010

Գ-50
380
760

ԸՐՀԱՄԵՐՀՈՒԹԻՒՆ

Գրչ. Տ. Գ. Գրիգորեանցեան

37(47.925)
Գ-33

23051

2991
39

ԸՐՀԱՄԸՐՀՈՒԹԻՒՆ

37(47·326)
Գ-33
Ամենայն

Ամենայն չարիք մտանեն 'ի միտս մարդոյ յանուամնութենէ · կոյր ղրկի 'ի ճառա-
գայթից արեգական , և ոգիտութիւն
ղրկի 'ի կատարեալ կենաց · լաւ է կոյր
աչօք քան կոյր մտօք , որպէս մեծ է հո-
գի քան ղմարմին , այսպէս մեծ է տե-
սառորութիւն մտաց քան ղմարմնոյ : Եթէ
կարի ոք առաւելեալ իցէ աշխարհական
մեծութեամբ , և մտօքն աղքատագոյն ,
այնպիսին ողորմելի է քան ղաղուս : ·
· · · · · Թագաւոր՝ Եթէ ոչ ունի զե-
մատութիւն աթոռակից իւր , ոչ կարէ
'ի վիճակին իւրում վայելուչ գալ : Իսկ
Եթէ առ մարմնաւորս այսպէս , որչափ
և առաւել առ հոգևորսն :

ԵՂԻՇԷ

Ոստեն կողմէն՝ սուրբ Երուսաղէմի Պատրիարքի ընտրութեան կերպին խնդրոյն պատրուակաւ աղգիս մէջ ծագած աշխարհելի խռովութիւնը՝ յարմար առիթ տուաւ քանի մի վատաբարոյ անձանց՝ իրենց հնացեալ չարեաց փոխարկայողջանութերն աղգիս վերայ

գոռացնել, մոռնալով ի սպառ, թէ կայ յերկինս վրէժխնդիր մի, որ հատուցանէ յորդւոց յորդիս։

Ա. Յոպիսիներն «ահա՛ հասաւ յարմար ժամանակն ըսելով», փառք ու պատիւ համարեցին իրենց՝ ազգիս վերադովեալ վիճակը ևս քան զեւս վեր ի վայր աղմկել կեղծ ազգասիրութեան դիմակով. որ ըսելէ՝ բորբոքեալ հրոյ մէջ նիւթեր աւելցնել, որ վառի, այրի յաւիտեան ու համատարած ճարակի։ Ջասի ըրին և կընեն, կարծեմ Աստուծմէ բարի վարձատրութեան մի, և մարդոցմէ փառաւորուելու և անմահ անուն ստանալու ակնկալութեամբ։ Արդ՝ Թող գիտնան անանկներն, որ այս իրենց ակնկալութիւններն ջպիտի ի դերևս ելնեն. սակայն խիստ ընդհակառակն՝ պիտի յիշուին յաւիտեան. ինչպէս իրենց շատ նախորդներն նոյնիւք կյիշուին ազգային պատմագրութեան էջերուն մէջ. քան զի ոչ նուազ վատութեան և ազգատեցութեան գործ է այս ըրածներնին՝

այն նզովիւք յիշատակեալ անձանց ը-
բածներէն։

Ո՛հ, տեսան այս խռովարար և գըլ-
գռիչ անձանց զանազան ազգակոծան
չարիքն՝ ճշմարիտ ազգասէր և լուսամիտ
Անձինք, և ցաւ ի սիրտ՝ ամեն ճիգն
թափեցին ամեն կարելի միջոցներով, և
կթափեն, ու պիտի թափեն անոնց ա-
ռաջքն առնելու, որոնց յաջողութեա-
նը համար քաջայոյս եմք, վստահելով
Աստուած՝ որ գիտէ մարդուս երիւ-
կամուռնքը և ճշմարտութեան ու ան-
կեղծութեան կուսակից է միշտ։

Ա.ՐԴ՝ մենք ալ, որ այս ճշմարիտ ազ-
գասէր և լուսամիտ անձանց գաղափա-
բակից գտնուած եմք, տեսնելով այս ա-
մեն անոնց թափած սուրբ քրտինքն,
բարեմաղթու էինք միշտ յաջողութեա-
նը, և եմք, ու պիտի ըլլամք. և մեզի հա-
մար, քանզի չունիմք այնչափ բաւա-
կանութիւն կերպով մի ձեռնտուու-
թիւն մ՝ընել այս միջոցիս, աւելի ընտ-
րելի էր լռութիւնը, քան ուրիշ կա-
րևոր միջոցի մը ձեռնարկութիւն. և

արդարև նոյնն ըրած էինք ցարդ. մա-
նաւանդ ուրիշներն տեսնուեցան որոնց
կողմէն այս կարևոր միջոցներն չգլաց-
ուեցան, գրեցին, քննեցին և հրատա-
րակեցին. յայտնեցին ճշմարտութիւնն
ու ստութիւնը. ազգասիրութիւնն ու
ազգատեցութիւնը, լոյսն ու խաւարը
որոնց պարտիմք շնորհակալ ըլլալ՝ ի-
րենց ճշմարտասիրութեան և անկեղծ
ազգասիրութեան սուրբ զգացմանցը
համար։

Բայց արդ՝ հարկ եղաւ մը մեր լը-
ուութեան ընտրութիւնը ի բաց թող-
ուլ. որովհետև տեսանք որ երթալով
կառաւելուն չարիք, և ազգիս յառաջ-
ադիմութեան արգելմանը համար
ինքզինքին նուիրած անձանց կողմէն
ամեն կերպ, ամեն միջոց ի գործ կը
դրուին. ուստի մը անհնար եղաւ մեզ
լռել, և ահաւասիկ մեր լուութեան
ընտրութեան լքման պատճառը։

Ա՛հ. սարսափ ու սոսկում կիսաղայ
երակներուս մէջ ու բոլոր մարմինս կը
դողայ. երբ կյիշեմ՝ զիս այս գրուա-

ծոյս հարկադրող ոճիրը. այսինքն է՝ ուսմունքն ի՞նչ է. ուսուցիչներին անհասպ կելլան. առջի մարդիկն ուսուցիչն էին որ ՁԱՂԳԸ կը կառավարէին »։ Ա՛հ. ա՛հ, արհամարհութիւն, արհամարհութիւն, հը բասպոյը կուրութեան։

Ընհնարին ցաւ է ինձ, քանզի մինչդեռ ուսման ու գիտութեան անժխտելի կարևորութիւնն ու յարգը տակաւին ըստ արժանւոյն չէ ծանօթացած սիրելի ազգիս մէջ, և մինչդեռ նոր մուցուած են ազգայնոց բաղմայց հանապազօրեայց հագնեցքներն թէ « ազատ գրել, կարդալ սովրի տէ, վարդապե՞տ պիտի ըլլայ », կամ թէ՝ « ուսմունքն (պաղդալն ու խասապը) կառնէ՞ », ահա՛ ազգիս այս վիճակին մէջ կը տեսնուին անանկ ազգայիններ, որոնք երանի էր թէ ծնած չըլլային, որ ելեր կը քարոզեն ասդին անդին թէ « ուսմունքն ի՞նչ է, ուսումնականներն անհասատ կելլան. առջի մարդիկն ուսումնական էին, որ ազգը կկառավարէին »։

Վաշ. բաբէ ազգասիրաց. ասկէ աւելի ազգասիրութիւն կրնայ ըլլալ. ասկէ աւելի ազգային յառաջադիմութեան փափաք կրնայ ըլլալ. կուրութիւն և յետամնացութիւն կքարոզեն. ուսմունքն ու ուսումնականներն կվատահամբաւեն. արհամարհելի կը ցուցնեն յաչս Ազգիս. ապրինք, չպիտի մոռնանք զձեզ ու ձեր այս նախատելի քարոզութիւններն. ինչպէս նաև Աստուած անշուշտ պիտի վարձատրէ ըզ ձեզ նման ձեր նախորդներուն, որոնց մէջ շատերն յայտնի են, և այս օրերս ձեզի համար յաճախակի կը յիշուին. և որոնց անուանակից և գործակից դասելով զձեզ՝ արժանաւոր պատիւներ կընծայեն ձեզ լուսամիտ Անձինք։

Արդ՝ դառնանք մենք այս սարսափելի քարոզութեան մէջ բոլանդակ եալ երեք անտանելի սուտերեանց մի առ մի բացատրութեանը։ —

ԱՌԱՋԻՆ

«Ո՞ւմ՞նչն ի՞նչ է»

Այս զարմանալի հարցմանը համար կուրութիւն, արհամարհութիւն ը սինք. և արդարև անանկ է. զոր ոչ ոք կրնայ զրպարտութիւն համարել, եթէ ուշի ուշով քննէ։ — Ո՞չ ապաքէն ուսմունքն է, որ մարդուս միտքը կը լուսաւորէ, ուսմունքը չէ՞, որ զմարդ իր անուանը արժանի կը հանդիսացնէ. այո՛. կ՚ըլլէ, որ անուսումն է, ի խաւարի է, որ անուսումն է. չկրնար դէշն ու աղէկն իրարմէ որոշել. անուսումնութենէ կմտնեն մարդուս միտքըն ամէն չարիք. անուսումն մէկն չկրնայ գիտել, թէ ի՞նչ է աղգ, ի՞նչ է աղգասիրութիւն, և ի՞նչ է աղգայնոյ մի առ իւր աղգն ունեցած անհրաժեշտ պարտիքն. անուսումնութիւնը՝ որ է կուրութիւն, կտանի կգլորէ ըզմարդ, զաղգութիւն, կորստեան անդընդոց խորերն. անուսումնութեամբ փճացան աղգեր. անուսումնութեամբ

կանարգի ազգ մի ու կնախատի. ընդ-
հակառակն՝ ուսմամբ և մտաւոր լու-
սաւորութեամբ կյառաջանայ, կզար-
գանայ և սիրելի կըլլայ աշխարհի ու
յաւիտեան կփառաւորի. զասոնք և
անոնց նման ուսմունքէ առաջ եկած
բարեաց արդիւնքն չգիտցողն, կամ՝
գիտցող՝ ու վատաբար զլացողն ինչ
արժանիք ունի, և ազգասիրութենէ.
մարդկութենէ որչափ հեռի մնացած է,
գիտէ ամեն ճշմարտասէր։ — Գիտէ
նաև անշուշտ ամեն ճշմարտասէր, որ
նաև այս ներկայ խռովութեանս մէկ
գլխաւոր պատճառն ալ անուսումնու-
թիւնն, տգիտութիւնն է դժբաղդա-
բար։

ԵՐԿՐՈՐԴ

“Ուսումնականներն անհաւասար կըլլան”

Ասի. այս ստապատիր և դժոխային
քարոզութիւնը, որ գործիք ըրած է
իրենց ձեռքը միամիտ ազգայիններս
պատրելու, գրգռելու, գայթակղե-
ցընելու և ուսման ուսումնականաց

արժանիքն ու վարկը ջնջելու եկած են, արդարև խիստ անտանելի է և յետին աստիճան վատութիւն։ — Ի՞նչ անհաւատութիւն տեսնուած է ցարդ՝ ուսումնական անձանց վերայ. ո՞վ ընդդէմ կրօնի մեղանչած է։ Միթէ ազգիս յառաջադիմութեան համար բոլորով սրտիւ ջանացողներն անհաւատ կըլլան։

Միթէ ազգիս ազիտութեան վիճակն յեղափոխելու համար՝ դպրոցներ բանալու և անոնց օր քան զօր արդիւնաւորութեանն համար աշխատողներն անհաւատ կըլլան։

Միթէ Ազգիս տառապեալն, անկարն, անոքն ու հիւանդը օրինաւորապէս խնամելու համար ամեն աշխատութիւն յանձն առնողներն անհաւատ կըլլան։

Միթէ զաղգային կառավարութիւնը կարգի, կանոնի տակ սահմանելով և ամեն ազգային անհատի առ Ազգն և ազգին առ ամեն ազգային անհատ ունեցած անզլանալի և նուիրական

պարտաւորութիւնն ճանչցնել ուղելով՝ վարուողն և վարուիլ աղաչող սիրելի Անձինք անհաւատ կըլլան։

Կամ մասնաւորապէս (իբր) արդի խնդրոյս նկատմամբ ըսելով՝

Միթէ Երուսաղէմի միաբանութեան կանոնադրութիւն չընդունելն ու առ աղգն պարտաւորած հնազանդութեան ժխտումը տեսնելէն, և կըրօնական արժանապատիւ ժողովոյն և իւր սրբազան Նախագահին «դրսէն ալ կըլլայի» վճիռն ընդունելէն յետոյ՝ նոյն սրբազան և բարձր ու փափուկ վայրին պատրիարքութեան համար՝ «հաւատարիմ, արթուն և բանիբուն մէկն դրսէն ալ կըլլայ» ըսողներն անհաւատ կըլլան, օրինազանց, աւանդազանց կըլլան։

Ի՛նչ խղճմտանք, ի՛նչ քրիստոնէութիւն է ասի. բարերարը, երախտաւորը, աղգասէրը անհաւատ քարոզել. ասոնք անհաւատութիւն են։

Ո՛վ Աստուած, անշուշտ կտեսնես այս ամենը. անշուշտ պիտի դատես.

քեզ կյանձնեմք դու գիտես, ինչ հաստատացանել պէտք է այսպիսի անամօթ և անխիղճ անձանց, որ կզրպարտեն, կարհամարհեն պատուոյ և գովեստից արժանի Անձինքն։

ԵՐՐՈՐԴ

“Աչի մարդիկն ոչոչ-ինալոն էին, որ զաղ-գը կիսավարէին”։

Այս քսու հարցման վերայ ալ արդարև խիստ կզարմանամք, որ արդարատէր անձ կրնայ ուրանալ առջի մարդոց ոմանց առ Ազգն ունեցած բազմադիմի երախտիքն. կիշուին անոնք ու երախտագէտ սրտերու մէջ անջընջելի կերպով դրոշմուած են անոնց գովելի անուններն։ — Բայց դարձեալ առջի մարդոց շատերուն անուսումնութեան երեսէն Ազգիս գլխոյն հասած ու հասնելիք չարիքն ու թշուառութիւնն ալ արդեօք մոռանալ հնարին է. քանզի չգիտելով երբէք թէ ազգն ինչ է, և ազգային պաշտաման մի մէջ ինչպէս վարուիլ արժան է, չա-

բաչար կիրառութիւններ ըրած են և զանոր ներկայ և ապագայ բարին իւրենց չար կրիցը զոհեր են բազմիցս տգիտաբար։ — Բայց ինչ պէտք է մեզի հոս բաղդատութեան ձեռք զարնել առջի և արդի կառավարութեան շօշափելի տարբերութեանը համար. բարեմիտ մէկ մը կրնայ այս երկուքն իրարմէ որոշել. ու ՝ին ազէկ է, ՝ին գէշ է, գիտել ու խոստովանիլ. ճըշմարիտ ազգասէր մի, չեմ կարծեր որ երկուանայ, թէ ուսումնական մարդիկ աւելի լաւ գիտեն՝ զԱզգը օրինաւորապէս կառավարել, ու Անոր ապագային համար ունեցած պիտոյիցը ծառայել, սատարել հեռատեսութեամբ. դպրոցներ բանալ, բայց չէ թէ լոկ անունով, այլ նաև ինչպէս և ինչ պէտք է անոր բարիք կառավարութեանն ու արդիւնաւորութեանն՝ զանոնք տալ ի միասին հոգալ. և այլ ուրիշ ազգային ամէն պարտաւորութիւն կարծեմ, ուսումնական և բանիբուն Անձինք աւելի ձեռնհաս են տնտեսել

ու բարեկարգելքան անդէտ մարդիկ։
— Ի՛նչ գնաս, ի՛նչ չարիք արդեօք տես-
նուած է ուսման և ուսումնական աց
երեսէն, ի՛նչ վատութիւն է ուրեմն
զանոնք այսպէս վատահամբաւելն՝ ը-
սելով թէ « առջի մարդիկն ուսումնա-
կան էին, որ զաղգը կկառավարէին ».
քսութիւն, արհամարհութիւն չէ՞ն
ասոնք. աղգին հիմը տապալելու մի-
ջոցներ չէ՞ն ասոնք չար կրից ծառայե-
լով. ասոնք, այսպիսի գայթակղիչ քա-
րոզութիւններն Աստուծոյ դէմ մե-
զանչելչէ՞, Աստուծոյ դէմ գործելչէ՞,
աս չէ՞ անհաւատութիւնը. բամբա-
սել անմեղն, զրպարտել արդարն ու
բարեսէրը. զասո՞նք կը պատուիրե
սուրբ գիրքը. ասո՞նք են Քրիստոնէա-
կան պարտքն. չէ՞ մի որ ասոնցմով մե-
ռած է մեր հաւատքն. որովհետև բա-
նիւ միայն Քրիստոնէութիւն է ասի,
և գործով՝ խիստ տարբեր և խիստ
հակառակ քրիստոնէական պատուիրա-
նաց։ — Ո՞վ ուսոյց ձեզ, քսա՛ւք, վա-
ղոք զվերս բժշկել, խռովութեամբ ըզ

խառվուԹիւն բառնալ. սատանայն արդեօք, քանզի այն միայն յայսպիսիս կՀրապուրէ իր որդիքն։

Ով Աստուած, դու Հայէ յերկնից տառապեալ Հայուն վերայ. դարձ և զեղջ տուր Անոր ընտանի ԹշնամեայՑ չարացեալ սրտիցը, որ դառնան իրենց այս չար ճանապարհէն և գԹան աղգիս վերայ, որ մօտ ի կորուստն կտեսնուի. ազատէ զազգը անոնց հարստահարուԹեան սպառիչ ձիրաններէն և կաԹէ անոնց սրտից մէջ արդարուԹեան և իրաւանց սուրբ նշոյլը, որոնց գիտուԹենէն բոլորովին հեռու՝ Ազգիս ԹշուառուԹեանն ու անկմանը մեծամեծ պատճառներ կարձանանան։

Վերջապէս, վերջապէս, ահա ուսմունքն ու ուսուցիչներն կարհամարհին այսօր, այնպիսի դարու մը մէջ, որ աշխարհ գիտէ անոնց կարևորուԹիւնն ու յարգը. և կՀանայ, կՀրամանի տարրացնել ամենուն սրտին մէջ. Հայոց Ազգն է, ուր այս լուսաւորեալ դարուս ոգւոյն հակառակ քարոզուս

թիւն կըլլայ. ոչ ապաքէն ամբարշտու-
թիւն է ասի. ահ, կքստմնիմ ես ու
կսարսափիմ. անմիտք, ասկից ուրիշ
բան չգտնուեցաւ քարոզելու. ձեր
կիրքերն յագեցնելու. ուսման ու ու-
սուցմնականաց յարգն ու վարկը վատա-
համբաւելով՝ ի՞նչ օգուտ, ի՞նչ աղէ-
կութիւն կյուսաք ըրած ըլլալ սիրելի
աղգիս. եթէ ոչ՝ տգիտութեան խա-
ւարին մէջ զանոնք յարացնել, ի խա-
ւարի գործել տալ, վերջապէս տգի-
տութիւնը սիրելի ընել ազգիս, որուն
երեսէն, ահ, կրած է միշտ իր տառա-
պանքը, և այսօր դարձեալ, ահա ա-
չաց առջև է, անոր երեսէն է իր այս
ցաւալի խռովութիւնն, որուն ներքև
կհեծէ յանհնարինս, և որուն վերջա-
նալն մի միայն Ամենակալին երջանիկ
ակնարկութեանն ու գթութեանը կը
կարօտի։

Հայց Ել Տէր, աղաչեմք արտաս-
ուագին, տառապանաց Հայոց, և ի
խաղաղութիւն, ի սէր և ի միութիւն
դարձուր զամենքն. լուսաւորէ Տէր,

մաքերն ամ՝ ուսմամբ ու իմաստութեամբ, որ ճանչնան արդարութիւնն ու ճշմարտութիւնը, և դառնան անոնց ջատագով ու պաշտպան հանդիսանան, և ոչ՝ ստութեան և անիրաւութեան։

22 Մեպ՞ 1861 Տ. Գ. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ց. ՄԽԻՀԷՆՏԻՍԵԱՆ

١٢